ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը «Լավագույն ուսանող 2016» մրցանակաբաշխությանը

Հարգելի պարոն Ավագյան,

Հարգելի ներկաներ, սիրելի ուսանողներ

Օգտվելով առիթից՝ նախ ցանկանում եմ շնորհավորել ձեզ Երիտասարդության համաշխարհային և Ուսանողության միջազգային տոների առթիվ, մաղթել առողջություն, իղձերի իրականացում և երիտասարդական անսպառ ավյուն:

Մեր համալսարանը, ինչպես գիտեք, անմասն չի մնացել այս տոներից և մեզ մոտ այս առիթով նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ, որոնց շարքում առանձնանում է «Լավագույն ուսանող 2016» մրցանակաբաշխությունը: Տեղյակ եմ, որ լավագույն ուսանողին որոշելու հարցում հաշվի են առնվել ուսման առաջադիմությունը, մեկ այլ դեպքում՝ նաև հասարակական ակտիվությունը:

Սիրելի ուսանողներ, բազմիցս եմ նշել, որ համալսարանի գլխավոր առաքելությունը բարձրակարգ կրթության ապահովումն է: Բայց պակաս կարևոր չէ հայրենասեր, բազմակողմանի զարգացած և առաջընթացի ճանապարհը հաստատուն կերպով հարթող սերնդի դաստիարակումը: Ես ցանկանում եմ, որ բոլորիդ հայացքը ապագային ուղղվի դրական տրամադրվածությամբ, գիտելիքների ձեռքբերման մեծ եռանդով ու վստահությամբ: Հավատով ու գիտելիքներով

դուք կարող եք հաղթահարել դժվարությունները և դառնալ այն սյունները, որոնց կվստահվի մեր պետության ապագան:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիդ ու նաև շնորհակալություն հայտնում Հայաստանի երիտասարդական հիմնադրամին՝ համատեղ միջոցառումներին աջակցելու համար:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ